# Երիտասարդական հավաք "Իմ Օլիմպիադան"



Փետրվարի 7-ին Չալթրի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ "Իմ Օլիմպիադան" երիտասարդական հավաք՝ ի աջակցություն Սոչիի 22-րդ ձմեռային Օլիմպիական խաղերին մասնակցող մեր մարզիկների: Ցուրտ, բքառատ օր էր: Բայց, չնայած եղանակային այդ դաժան պայմաններին, երիտասարդները որոշեցին անցկացնել տոնական միջոցառում, Օլիմպիադայի բացման օրը մտովի լինել նրանց հետ, լինել հոգով ուժեղ և մարմնով առողջ: Մեր երիտասարդությունը իր էջն է բացել շրջանի սպորտային կյանքում: Քանի որ սպորտը կյանքի առողջ երևույթ է, նաև՝ ուժ, ճարպկություն, համարձակություն և ընկերություն:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին շրջանի վարչապետի տեղակալ Ն. Ս. Քեշիշյանը, մշակույթի և երիտասարդական քաղաքականության շրջանային բաժնի պետ Մ. Հ. Չուբարյանը, դպրոցների մանկական կազմակերպությունների անդամներ, "Երիտասարդ գվարդիա" կազմակերպության ներկայացուցիչներ: Միջոցառումը վարում էր երիտասարդության հետ տարվող աշխատանքի գծով շրջանային ադմինիստրացիայի մասնագետ Ա. Վ. Օլանյանը:

"Երիտասարդ գվարդիայի" անդամները պատվավոր հյուրերից հետո շնորհավորեցին բոլոր ներկաներին հիշարժան օրվա առթիվ: Հանդիսավոր մասից հետո անցկացվեցին կատակային մինի-օլիմպիական մրցումներ և պարահանդես:

Բոլոր ժամանակներում էլ օլիմպիական շարժման գլխավոր խորհրդանիշեր համարվել են նաև տարբեր գույնի հինգ օղակները: Դրանք խորհրդանշում են երկրագնդի հինգ մայրցամաքները: Իսկ դրանց փոխհյուսումը նշան է տարբեր ազգության մարդկանց բարեկամության և ազնիվ գոտեմարտի: Որպես ռուսական մարզիկների աջակցության նշան մյասնիկյանցի երիտասարդները երկինք բաց թողեցին օլիմպիական օղակների գույներով փուչիկներ: Վերջում էլ ի հիշատակ անցկացված միջոցառման նրաք մեկտեղ լուսանկարվեցին:

# Կանանց հարցերով խորհրդի հերթական նիստը

Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել կանանց հարցերով խորհրդի հերթական նիստը: Անցնելով օրակարգային հարցերին՝ խորհուրդն իր վերաբերմունքն է արտահայտել "Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի և "գենդեր" տերմինի շուրջ ձևավորված իրավիճակի նկատմամբ և ընդունել է համապատասխան հայտարարություն:

"1993 թվականին վավերացնելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որն իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթուղթ է, Հայաստանի Հանրապետությունը ստանձնեց որոշակի պարտավորություններ, այդ թվում նպատակ ունենալով վերացնելու կանանց հանդեպ խտրականությունն իր բոլոր դրսևորումներով: Օրենքի ընդունումը և դրա հետագա իրականացումը լուրջ առաջընթաց կհանդիսանա Հայաստանում կանանց և տղամարդկանց փաստացի հավասարությունն ապահովելու գործում:

Հավատարիմ լինելով ստանձնած պարտավորություններին՝ հարգել, պաշտպանել և նպաստել կանանց իրավունքների իրականացմանը, ապահովելու կանանց կարգացումն ու առաջխաղացումը, ինչպես նաև տղամարդկանց հետ իրավական և փաստացի հավասարությունը, Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է իրականացնել նշված խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը, այդ թվում գենդերային քաղաքականության և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրերը:

Կանանց խորհուրդը կոչ է անում քաղաքական և հասարակական գործիչներին վերջ մնալ չհիմնավորված մեկնաբանություններից ու հայտարարություններից, որոնք որևէ առնչություն չունեն հավասարության ու մարդու իրավունքների ապահովման հետ: Կանանց խորհուրդը նպատակահարմար է համարում նաև հետագայում ավելի մեծ ուշադրության արժանացնել կանանց իրավունքների և գենդերային հավասարության հարցերի լուսաբանմանը, համագործակցելով ինչպես հասարակական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ",- ասված է հայտարարության մեջ:

Այնուհետև անդրադարձ է կատարվել "Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին" ՀՀ օրենքի շուրջ ծավալվող քննարկումների պատշաճ մակարդակով կազմակերպմանը: Քննարկվել են նաև ՀՀ վարչապետի 2014 թ. "Լավագույն համայնքապետ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ", "Լավագույն կին-գործարար", "Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում" մրցանակաբաշխությունների կազմակերպմանն առնչվող հարցեր:

Կանանց Խորհրդի առաջարկությամբ է 2014 թվականը Հայաստանում հայտարարվել "Ընտանիքի տարի":

# ՆՇՎԵՑ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ

Փետրվարի 14-ին ամեայն հայոց եկեղեցիներում նշվեց Տեռնընդառաջի տոնը, որին մասնակցեցին բազմահազար հայ քրիստոնյաներ: Սուրբ արարողություններ կատարվեցին նաև Ռոստովի մարզի հայկական եկեղեցիներում:

*Մեր ընթերցողներից ոմանք խնդրում են պատասխանել Տեառնընդառաջի մասին իրենց հետաքրքրող հարցերին: Սիրով կատարում ենք այդ խնդրանքը*

*Հարց.-* Ի՞նչ է Տեառնընդառաջը:

*Պատասխան.-* Քառասնօրյա Հիսուսին տաճար տանելու օրվա հիշատակն է: Մովսեսի օրենքի համաձայն Հովսեփը և Մարիամը քառասնօրյա Հիսուսին տաճար տարան՝ Տիրոջ առաջ հանելու (Տեառն ընդ առաջ): Այնտեղ էր Սիմեոն անունով մեկը, որին խոստացվել էր մահ չտեսնել մինչև Օծյալ Փրկչի գալը: Նա ընդառաջ գալով, գրկեց մանկանը և գոհություն ու փառք տվեց Աստծուն, որ իրեն արժանի դարձրեց տեսնելու Փրկչին: Նա օրհնեց Մանկանն ու ասաց. "Հիմա արձակիր քո ծառային, ով Տէր, քո խոսքի համեմատ՝ խաղաղությամբ: Որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ազգերի համար" (Ղուկաս Բ 22-38): Հետևաբար Տեառնընդառաջը կլինի փետրվարի 14-ին (հունվարի 6+40 օր) և անշարժ է: Որպես տերունական տոն՝ փետրվարի 13-ի երկոյան կատարվում է նախատոնակ: Մոմեր վառելով եկեղեցու Սեղանի մոմից, հավատացյալները դրանք տանում են տուն:

* * *

*Հարց.-* Այդ ի՞նչ կապերից արձակվելու մասին է խոսում Սիմեոնը:

*Պատասխան.-* "Հայսմավուրքն" այդ մասին գրում է.

"Արդ Աստված ոչ թե մեկ, այլ երեք կապանքներից արձակեց մեզ. Օրենքի անեծքի կապանքներից, Ադամի անեծքից և մեղքի հնությունից՝ նորոգելով մեզ Ավազանով: Իսկ "արձակիր" ասելով, նա ոչ թե մահ-թում, այլ գոհության խոսք է ասում: Ողջ մարդկության անունից նա ասում է. Մարգարեներ ուղարկեցիր, հրեշտակներ իջան և ոչ մեկը չկարողացավ մեղքի կապանքներից ազատել մարդկային բնությունը: Բայց հիմա, երբ դու խոնարհվեցիր՝ արձակելու ես մեզ նախ մեղքի կապանքներից, ապա օրենքի ծառայությունից՝ որը հնացավ և անզոր դարձավ, և տանելու ես ձրի շնորհքի արդարության ճանապարհով: Իսկ ասելով՝ Քո խոսքի համեմատ խաղաղությամբ,- հիշատակում է այն մարգարեությունները, որոնք կատարվեցին Մանկան գալստով, և որ Նա է Խաչի վրա թափած իր արյունով խաղաղություն հաստատելու: Դարձյալ մարմնի աչքերով տեսավ Փրկչին, իսկ հոգու աչքերով՝ փրկությունը, որ Նա կատարելու էր Խաչի վրա" ("Հայսմավուրք", փետրվար ԺԴ):

* * *

*Հարց,-* Իսկ ինչո՞ւ էին նորածիններին քառասուներորդ օրը տանում Տաճար:

*Պատասխան,-* Հրեաների մոտ արու զավակ ունեցող մայրերը նախ յոթ օր պիտի սպասեին իբրև անմաքուր, ութերորդ օրը պիտի թլփատեին տղային և երեսուներեք օր ևս սպասեին: Այնուհետև հաջորդ՝ քառասուներորդ օրը, արու զավակին պիտի Տաճար տանեին՝ Տիրոջ առաջ հանելու, ընծայելու: Եգիպտոսի գերությունից ազատվելուց հետո՝ բոլոր անդրանիկները պատկանում էին Տիրոջը, այսինքն պիտի նվիրվեին Տաճարին՝ ծառայելու համար (Ելից 14, 19-20): Բայց անապատում՝ ոսկե հորթի հետ կատարված հայտնի դեպքերից հետո, բոլոր անդրանիկները ազատվեցին ծառայությունից և այդ ծառայության կանչվեցին միայն ղևտացիները՝ Ղևիի սերունդը (Թիվք գ,12): Բայց, իհարկե, ոչ ձրիաբար. ամեն արու անդրանիկ ունեցող՝ պետք է փրկանք վճարեր ղևտացիներին: Փրկագինը որոշվում էր ըստ կարողության: